

Ս. ՅՈՎՍԷՓ ՀՈՂՈՑՄԵՑԻ

7. Վարդանանց նահատակութիւն

Հաղիւ թէ Յազկերտ վստահացաւ եթէ «Հոռոմք ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէսութեանն. ոչ զօրու օգնակա- նութեան և ոչ այլ իրօք» (Եղշ. 66), յանկարծական ինն կեր- պով նոյն ինքն Միհրանեսէ՛հ փոխարքայն ճանպայ կը հանէր, և անոր ետեւէն զօրաւոր բանակ մըն ալ կը շարժէր։ Միհր- ներսէ՛հի պաշտօնն էր ուխտանենդներէ հայ բանակ մըն ալ կազմել Վասակայ օգնութեամբ և դառնալ, Հաղիւ թէ դատիւ կը ըրեր էին, ապրիլի Ծ.ին կամ ահեկանի Ծ.ին, կը լսէր Վար- դան թէ «զօր» եհաս բազում ի Հեր և ի Զարեանդ գաւառ»։ և հապճեպ արագութեամբ հրաւեր կը ղրկէր ուխտապահնե- րուն իրենց գունտերով Պարսկաստանէ եկող բանակին դիմաց քալել, անոր Հայաստան մուտքը արգելելու։ Մեծ էր եռանդը, և կասկածները մշտաւ պատրաստականութեան վարժեցու- ցած էին, ուստի հաղիւ թէ քառասուն աւուրց մէջ բանակը կը կազմուէր, և տակաւ յառաջելով Արտաշու կամ Շաւարշանի դաշտին մէջ Պարսից բանակը կը դիմաւորէին, Տղմուտ գետին եզերքը, Աւարայր գիւղին մօտ (Փրպ. 226)։ Բանակին հետ ի միասին կը հասնէին Յովսէփի կաթուղիկոս եկեղեցական պաշ- տօնէից բազմութեամբ և Ղեռնդ երէց, զոր Անգղայ օրէն իբ- րեւ պիտի կողմերուն գլխաւոր հոգեւորական գործիչը ճանչցանք։

Եւ յաւուր ուրբաթու մեծի տօնին պենտեկոստէին, կը դնէ Փարպեցի բանակին Արտաշ հասնիլը, և միւս օր, այսինքն շաբաթ աւուր առտուն տեղի կունենայ Աւարայրի ճակատա- մարտը։ Սովորութիւն եղած է պիտի օրը պատշաճեցնել հոգե- դալստեան տօնին վրայ եկող շաբաթին և հոգեդալստեան եօթ- ներորդ աւուր, իբրեւ շաբաթ մեծի տօնին պենտեկոստէին, և Աւարայրի ճակատամարտին թուականը կազմել և տոմարական հաշուով պատշաճեցնել զայն Յունիսի 2-ին, Սակայն Համբար-

ձուլե ետքը յինանց միջոցին մէջ պահոց օրեր դրուիլը, և Հոգեգալուստը եօթնօրէքով տօնելը, Շնորհալիէին հաստատուած և անոր ատենէ սկսած բաներ են, իսկ անկէ առաջ Պենտեկոստէն կամ յարութեան յիսունքը, որ է յինունքը, կը փակուէր հոգեգալստեան օրով, յիսուն օր շարունակ պահք չկայր, և հոգեգալստեան յաջորդող երկուշաբթիէն կսկսէր ամարան յիսնա- կը կամ ամարան աղուհացից պահքը, որոյ առաջին շաբաթը այժմ եղիական պահք կը կոչեմք: Այդ կոչումը նոյնութեամբ պահուած էր մինչև Վկայասէր Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, որ սոյն պահքին շաբաթ օրը մեռած է, և օրն ալ կը կոչուի՝ յառաջին շաբաթն ամառան աղուհացից, յաւուր շաբաթու (Ուռհ. 372), կամ յաւուր շաբաթու ի յիսնական ամառան» (Վարդ. 114): Ուրբաթու երեկոյին համար կը գրէ Փարպեցիին թէ՛ զուարճանային չափաւոր ուրախութեամբ կերակրովքն» (Փրպ. 229), որ կրնայ յարմարիլ չին դարուց մէջ ուրեք եղող պենտեկոստէի նախընթաց ուրբաթին, և ոչ թէ ամարան աղուհացից խիստ պտճք եղող ուրբաթին: Հետեւաբար պէտք է բանակին հաւաքուիլը դնել 451 մայիս 25 ուրբաթ օր, և Աւարայրի ճակատամարտը դնել մայիս 26 շաբաթ օր:

Փարպեցի կը կարծէ որ եթէ նոյն ուրբաթ օր յարձա- կէին, Վարդանանք՝ «կարող էին մասնաւորապէս փնասել երա- մակ յարձակ ծուլացելոց» (Փրպ. 226), այսինքն Պարսից, բայց հաւանաբար Հայերն ալ անպատրաստ էին, և իրենց պատրաս- տութիւնները թէ զինուորական էին և թէ հոգեւորական: Ուրբաթ երեկոյ զգինոն պաշտաման ժամու աղօթիցն», կը կատարէին, և կերակուրէ ետքը արթուն խնդրուածովք զգիշերն յաղօթա՝ կը հանէին, քահանայք մերթ սաղմոսարա- նին գութղայիւք, մերթ վարդապետական բանիւք» կը քաջա- լերէին: Առոնդ երկար կը խօսէր հրամանաւ Յովսէփայ, յե- տոյ կը լսուէր «հրեշտականման տեառն Յովսէփայ մարտիրո- սայորդոր վարդապետութեան» գեղեցիկ քարոզը, և նոյն կա- թողիկոսին հրամանով աւապան կուղղուէր և երախայները կը մկրտուէին, անկէ ետքը առաւօտու կանոնը կը կատարուէր, և սեղան կանգնելով բոլոր բանակը պատուական խորհրդոյ Մար- մնոյ և Արեան կը հաղորդուէր: Վարդան ալ կը խօսէր բանա- կը զօրացնելու, և անկէ ետքը ռազմագիտական կարգադրու- թեանց կանցներ. բանակին թիւերը կը բաժնէր, և հրամանա- տարներ և օգնականներ կորոշէր, մինչև որ մերձեալ էր այ-

նույնտե Ժամ ելից արեգական, և դունդն Պարսից Ճակատեալ
ի պատերազմն պատրաստէին» (Փրպ. 226—234, Եղշ. 77—88)։

Ուխտապահներուն թիւը 66,000 ըստած է (Եղշ. 77)։ Իսկ
Պարսից համար թիւը չկայ, այլ միայն Միհրնեսէհի կարգա-
դրութիւնը կայ յիշուած, որ «երիս ընդ միոյն», այսինքն է որ
Հայոց թուոյն եռապատիկը բանակ մը ձեռնարկած էր կազմել։
Պարսիկներու հետ էին ուխտանենդ դունդերը Վասակայ հրա-
մանատարութեամբ, և այն ոչ աննշան թուով մը. և ցաւալի
է յիշել այս տեղ որ Վարպրի մէջ հայ բազմակներ ալ զըտ-
նուեցան իրենց եղբայրներուն մարտիրոսութեան դահիճ և
պարսկին օգնական։ Պատերազմին մանրամասնութեանց չեմք
մտնել, որ սաստիկ եղաւ և առաւօտէն սկսելով մինչև երեկոյ
շարունակեց։ Նշանաւոր եղաւ մանաւանդ մեռած զօրավարնե-
րու շատութեամբ։ Պարսիկներուն կորուստը թուով աւելի ե-
ղաւ, այսինքն է 3544 հոգի և 9 մեծ և պատուաւոր զօրա-
վարներ, իսկ Հայոց կողմէն միայն 287 հոգի և դարձեալ 9 զօ-
րավար Վարդանով մէկտեղ, որովհետև Հայոց մեծ սպարա-
պետն ալ զարնուեցաւ և ինկաւ, և բանակը ցրուեցաւ և Պար-
սիկներ ետևէն իյնալով 740 հոգի ևս կոտորեցին, որով ամ-
բողջացաւ Վարդանանց նահատակաց 1036 թիւը (Եղշ. 93)։
Ըստ Փարպեղոյ 9 զօրավար Վարդանէ զատ և 276 զօրական
ճակատու վրայ նահատակուեցան և 750 հոգի բանակին ցրուե-
լէն յետոյ, որ Վարդանի հետ միենոյն թիւը կուտայ (Փրպ.
238)։ Յանուանէ յիշատակուած զօրավարները և իրենց հա-
մացեղ նահատակներուն թիւերը հետեւեալներն են.

Վարդան և 133 հոգի Մամիկոնեանց ցեղէն.

Խորէն և 19 հոգի Խորթոռունեաց ցեղէն.

Արտակ և 57 հոգի Պալունեաց ցեղէն.

Տաճատ և 19 հոգի Գնթունեաց ցեղէն.

Հմայեակ և 22 հոգի Դիմաքսենից ցեղէն.

Ներսէս և 7 հոգի Քաջրեքունեաց ցեղէն.

Վահան և 3 հոգի Գնունեաց ցեղէն.

Արսէն և 7 հոգի Ընծայնոց ցեղէն.

Գարեգին և 20 հոգի Սրուանձտեանց ցեղէն.

Պատերազմին մէջ գտնուող միւս նախարարներն, որոց
գունդերէն ալ պէտք է գտնուին մնացեալ 740 նահատակնե-
րուն թիւին մէջ, հետեւեալներն են.

Ներշապուհ Արծրունի

Թաթուլ Դիմաքսեան
Արշաւիր Արշարունի
Միհրշապուհ Մարգարտունի
Արտակ Մոկացի
Փալիադ Առաւելեան
Հմուտն Անձեացի
Խոսրով Գաբելեան.
Կարէն Սահառունի.
Փարսման Մանգակունի.

Այրուկ Սլկունի.
Վրէն Տաշրայի և Հաջ ախոռապետ.
Մամիկոնեաններէն Համազասպեան ալ.
Դիմաքսեաններէն Գաղրիկ ալ.
Արծրունիներէն Ապրսամ ալ.
Սրուանձտեաններէն Խուրս ալ.

Ասոնցմէ զատ նաև Ռշտունիք, Տրդատունիք, Ակէացիք, Բողեանք, և Վահեունիք, և արքունի գործակալներուն գունդերը, Վահան Ամատունի և Ատում Գնունի ալ կը յիշուին, ըսյց բանի որ ասոնք պատգամաւորութեամբ բացակայ էին և պատերազմին օրը դեռ հասած չէին (Փրպ. 244), անոնց սեփական Ամատունեաց և Գնունեաց գունդերը պէտք է իմանալ (Եղշ. 77 և 93, Փրպ. 234 և 237). Այս կերպով գրեթէ բոլոր Պարսից բաժնին նախարարութիւններ մասնակեց կը գտնուին, միայն Սիւնեաց և Բադրատունեաց գունդերը չեն յիշուիր ընաւ, թէպէտ Վասակայ երկու եղբորորդիները Բաբգէն և Բակուր ուխտապահ նախարարներուն հետ կը յիշուին յայտնապէս (Եղշ. 72).

8. Բանտարկութիւն եւ աքսոր

Յովսէփ կաթողիկոս, Ղեւոնդ երէց, եկեղեցականաց բազմութիւնը և բաւական գունտ մը, պատերազմէն ետքը ապաստանած էին մօտաւոր բերդ մը, որոյ անունը չյիշուելուն, Արտաշու կողմերէն գլխաւոր ամրոցը՝ Հաւարշանի բերդը իւրէպ է կարծել. Մուշկան և Վասակ բերդը պաշարեցին և կեանքի ապահովութեամբ անձնատուր լինել առաջարկեցին. Բակ զօրապետ չլստահացաւ և 700 զինուորներով բերդէն ելաւ և աղատեցաւ. մնացեալներ անձնատուր եղան, ըսյց տրուած

երգման հակառակ զինուորներէն 213 հոգի ջարդուեցան, եկեղեցականներ արձակուեցան, և միայն Յովսէփ կաթողիկոսը և Ղեւոնդ երէցը, իբրեւ զլիաւոր ֆրանսապարտներ և որովհետեւ չարագործ ի դուռն կարգացին, չարձակուեցան, այլ «գան հարեալ հրամայեցին պահել զգուշութեամբ» (Եղշ. 96)։ Այս կէտէն կսկսի Յովսէփայ խոստովանողական և մարտիրոսական հանդէսը, և կաթողիկոսական իշխանութեան պաշտօնավարութենէն արգելուելը ու դադարուելը, այլ մեք հայրապետական յաջորդութեան վրայ չխօսած, պէտք է իւր վկայաբանութիւնը աւարտեմք։

Աւարայրի կարծեցեալ յաղթութիւնը Յաջկերտը չգոհացուց, կերեւի թէ չէր ուզեր այսչափ և այսպիսի ֆրանսերով նպատակը յառաջացնել։ Մուշկանը զրկեց ուրիշ տեղ և Վասակին հրաման զրկեց Տիգրան ներկայանալ, և թէ մարզպանութիւնը և թէ հրամանատարութիւնը յանձնեց Ատրորմիզդ Արշական պարսկին։ Բայց մինչև որ հրամանը հասնի Վասակ և Մուշկան իրենց գործունէութենէ ետ չէին կեցած, և իբր թէ ապստամբ և յաղթուած ընտանիք մնացորդները կը հալածէին։ Նմանապէս հետամուտ եղան ուխտապահ նախարարաց զաւակները հաւաքել իբրեւ պատանդ պահելու համար, որոց մէջէն միայն Վարդանայ եղբորորդիներն Վահան և Վասակ և Արտաշէս, և Վարդանայ թոռները Ներսէհ և Հրահատ յիշուած են յանուանէ (Փրկ. 249, 378)։

Միւս այլ աշխատութիւններն եղաւ կրակ սպաննած լինելու յանցանքով մեղադրուած եկեղեցականներէն գոնեա քանիները ձերբակալելու ժամանակին իբրեւ զլիաւոր ֆրանսապարտ ներկայելու համար։ Այս կարգէն երկուքը, Յովսէփ Հողոցմեցի կաթողիկոսը և Ղեւոնդ Վանանդեցի մեծ երէցը, արգէն յիշեցինք։ Նոյն օրեր ուրիշ երէց մըն ալ նոյն կերպով Արշարունեաց Կապոյտ բերդին մէջ անձնատուր եղաւ երգմանց վստահանալով, այլ իսկոյն երկաթի զարնուեցաւ (Եղշ. 98)։ Սա էր Արշէն երէց Բագրեւանդայ Եղեգիկ գիւղէն և «տգիտազոյն ի գրոց միտթարութենէն» (Եղշ. 119)։ Թաթիկ եպիսկոպոս Բասենոյ, Մեսրոպայ ձեռնասունը, ատրուշան մը կործանած լինելու ամբաստանութեամբ, ձերբակալուեցաւ և ընտարկուեցաւ։ Իսկ Սամուէլ բաշանայ և Աբրահամ սարկաւագ, Այրարատոց Արած աւանէն, որք Արտաշատու ատրուշանը քանդած էին, ասոնք ալ Վասակայ ձեռք իբրեւ յանցապարտ ընտար-

կ'ւեցան, և իբրև մեղսակից առաջիններուն հետ խառնուեցան:

Յովսէփ և Ղևոնդ առանձին կերպով և շուտով ճանապարհանուեցան թէ իբրև գլխաւորներ և թէ իբրև բարձրագոյն ատեան բողոքողներ: Գիտեմք որ Վասակ Յազկերտի 13-րդ տարւոյն մէջ ճանապարհ ելաւ երթալ ի Տիգրոն (Փրպ. 249), ուրեմն 451 յուլիսը չելած և ճանպուն վրայ հանդիպեցաւ այն երկուքին, որք ջորիներու վրայ շղթայակապ կը տարուէին: Կեղծաւորութեամբ սէր ցուցուց և կերակուրի ալ հրաւիրեց, և ինքն իւր շքեղ պատրաստութեամբ անցաւ ու դնաց (Փրպ. 254), մինչ սուրբերը հազիւ 80 օրով կրցան Տիգրոն հասնել (Եղշ. 101): Շատ նշանաւոր է Վասակայ մօտեցած ատեն Յովսէփին տալ Ղևոնդ ուղղած խօսքը՝ «նա ամէջող չէ, կըսէ Յովսէփ, հարկաւ ողջունի կուգայ, մտածէ որ յարմար պատասխանը տաս: Ղևոնդ կը պատասխանէ՝ «Ողջոյնը տէրունական է և կուտանք, երբ ընդունողը արժանի չէ, ողջոյնը չհանգչիր»: Ասոր վրայ վերոյիշեալ սիրալիր տեսութիւնը տեղի կունենայ, և Վասակ կը կարծէ թէ սուրբերը իր վրայ միամիտ են, այլ երբ ամեն բան կը լմնայ և Վասակ կը մեկնի, Ղևոնդ ետեւէն ձայնելով կը գուշակէ, թէ սպասած պատիւը պիտի չգտնայ և զլուծը ուսերուն վրայ հայաստան պիտի չգառնայ» (Փրպ. 250—254):

Վասակայ մեկնելէն յետոյ Ասորորմիզդ ճարտար կերպ մը կը բռնէ, կուզէ երկիրը հանգարտեցնել ժողովրդեան վստահութիւն և ապատութիւն շնորհելով և միւս կողմէն կը ճշշէ և կը հեռացնէ անոնք որ գլխաւոր գործիչներ եղան վերջին շարժմանց ժամանակ: Զինեալ դիմադրութիւն ընողներ երեք կողմ հաւաքուած էին, Պարթարներու վրայ, Արցախու մէջ և Տմորեաց կողմերը: Առաջին խումբին գլուխն էր Հմայեակ Մամիկոնեան, որ պատերազմին չհասնելով իբր Վարդանայ եղբայր և յաջորդ գլուխը կը ժողուէր ուխտապահներուն մի մասը. այլ Որջնահողի պատերազմին մէջ ինքն ալ կը զարնուէր և կը նախապահուէր: Արցախու և Տմորեաց գունդերը բաւական վնաս կը հասցնեն Պարսից, այլ որոշակի չեմք գիտեր թէ ոյք էին անոնց զօրապետները: Ասորորմիզդ խաբէութեամբ իրեն հրաւիրեց գլխաւոր նախարարները. իբր թէ թագաւորին գթութեան արժանացած լինին, և եկողներէն 45 հոգի զգուշութեան ներքէ Տիգրոն դրկեց. ուր անմիջապէս բանտարկուեցան, և ասոնք են կապեալ նախարարները, որոց վրայ պիտի խօսիմք: Ե-

կեղեցականներէն ալ խաբէական հրաւերով ձերբակալեց Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը իւր Գաշաշ սարկաւազով, և Արծրունեաց դրաններեց Աղբակեցի Մուշէ բաշանայն և Արշէնի ու Սամուէլի ու Աբրահամու հետ կապանօք զրկեց ի Տիկւբոն, Իսկ Բասենոյ Թաթիկ եպիսկոպոսը արդէն Խուժաստան արքսորուած էր Վասակայ ժամանակէն:

Ամենուն հաւաքուելէն ետքը, այսինքն է 451 տարւոյ վերջերը մեծ դատաստան մը բացուեցաւ ի Տիկրոն, Հայաստանի ձախող պատահարներուն սկզբնապատճառները գտնելու և դատելու համար. զի առանց օգտի Պարսիկներէ մեծ կորուստ եղած էր, մարդ նահանգ մը ի յուր աւարուած էր, պետուածեան տուրքերը խախտուած էին, և քաջութեամբ և հաւատարմութեամբ երախտաւոր սպարապետ մը և զօրապետներ պակասած էին: Քննութիւնները կը վարէր Միհրնեսէհ, թագաւորն ալ ի մօտոյ գործին կը հետեւէր, ինքն ալ ստէպ հարցնելով և լսելով: Եկեղեցականները առանձինն առանձինն ալ հարցաքննուեցան, նախարարները որսալու միջոցներ ալ գործադրուեցան, ուրացութիւն առաջարկուեցաւ իրրեւ միջոց ամեն ամբաստանութենէ արդարանալու, բայց այս անգամ ոչ թէ միայն 8 եկեղեցականներ, այլ և 35 նախարարներէն ոչ ոք յանձն առաւ ուրացութիւնը, և ոչ իսկ կեղծեալ կերպով: Մէջերէն երեք երիցագոյններ՝ Ներշապուհ Արծրունի, Վահան Ամատունի և Շմաւոն Անձեացի կեղծեալ ուրացութեան ընկերներէն էին, եթէ անձ ալ Աւարայրի օրուան զօրապետներէն էին՝ Վարդանի եղբայր Համալասպեանը ու փեսայ Արշաւիր Կամսարականն ալ ի միասին: մնացեալ 25-ն ալ նշանաւոր նախարարներ էին:

Որովհետեւ դատական քննութիւն բացուած էր, ամբաստանեալքը ճշմարտութիւն երեան բերելու համար ուղղակի Վասակի դէմ դատախազ կանգնեցան, և համարձակ յայտնեցին թէ զինեալ զիմադրութիւն կալմակերպելու և Յոյներէն օգնութիւն խնդրելու համար Վասակ ալ իսկզբան իրենց խորհրդակից և գործակից էր: Ատոմ Գնունի առաջին անգամ իրողութիւնը կը պարզէր հաղարապետին առջև, յայտնելով թէ Վասակ իրեն յանձներ էր իւր թուղթերը տանել (Եղշ. 109): Սահակ եպիսկոպոս ալ եկեղեցանանց կողմէն Վասակայ ընթացքը կը ցուցնէր (Եղշ. 105), և վերջապէս յատենի թագաւորին Արշաւիր Կամսարական, իրրեւ ամենուն կողմանէ ընտրուած

փոխանորդ իրաւագիտական կերպով խնդիրը կը փաստաբանէր (Փրպ. 273—279)։ Եղիշէ կըսէ թէ կայսեր և Անտիոքայ սպարապետին և Աղձնեաց ըզնելին և ուրիշներուն գրուած թուղթերուն վրայ Վասակայ մատանւոյն կնիքը կը ցուցնէին (Եղշ. 103)։ սակայն այս իրերը հարկաւ իրենց տեղերը յանձնուած էին, և լաւագոյն է Փարպեցւոյն հետ ըսնլ թէ Արշաւիր Կամսարական մէջ տեղ կը հասներ Վասակին կողմանէ իւր աներոջ Վարդանին ուղղած գիրը, որով նա Վարդանը Յունաստան փախչելու խորհուրդէն կը կասեցնէր, և Յունաց կամ Հոնաց օգնութեամբ զօրաւոր ապստամբութիւն մը կալմելու խորհուրդը կառաջարկէր։

Կապելոց յառաջ բերած ամբաստանութիւնը հաստատուեցաւ և Վասակ յանցապարտ դատուեցաւ, բոլոր պաշտօններէն ու պատիւներէն զրկուեցաւ, արքունական գանձուն ուղղակի և անողղակի կրած վնասը տուածելու դատապարտուեցաւ, և Տիգրանի մէջ բանտարկուեցաւ (Փրպ. 282)։ Ըստ Եղիշէի պատմութիւն, «հատաւ վճիռ մահու ի վերայ նորա» (Եղշ. 107)։ որ ան. միջական գործադրութեամբ հաստատուած չէ, և եթէ ցկեանս բանտարկութեան վրայ չմեկնեմք, կրնայ ընդհանուր կերպով առնուիլ իբր զի արքունի գանձուն պարտականներ իրենց գոյքով և անձով և կեանքով իսկ պարտքերնին վճարելու կը պարտաւորուէին և կը բռնադատուէին։ Վասակայ վերջը չարաչար եղաւ «Ամս ինչ» (Փրպ. 284)։ Տիգրանի մէջ բանտարկութիւն կրելէ ետքը, նեղութիւններէ մաշած, հառաչելով և զանձն թշնամանելով մեռաւ, ինչպէս Վասակայ սպասաւորներէն լսելով կը պատմէ Փարպեցի (Փրպ. 285)։ Բայց Եղիշէ կը յաւելու թէ դժնդակ ախտի հանդիպեցաւ, բամեալ, արորեալ, լուծեալ, կորացեալ և որդնալից եղեալ շիրիւ զշուն մեռաւ, և իբրեւ դէշ քարշեցաւ, և մեռնելէն ետքը անունն ալ չյիշուեցաւ (Եղշ. 108—109)։

Կապեալ եկեղեցականաց և նախարարաց դառնալով, ասոնք Վասակայ դատապարտութեամբ ալ հարկաւ արդարացած պիտի չըլլային, սակայն բաւական ազդեցութիւն գործեց մարդպանին մեղսակից լինելուն յայտնութիւնը։ Ոչ ոք մահուան դատապարտուեցաւ, նոյն իսկ կրակ սպաննող եկեղեցականաց մէջէն, այլ ամենքն ի միասին խիստ բանտի դատապարտուեցան Վրկան նահանգի բերդերէն միոյն մէջ, որոյ անունը յիշուած չէ։ Եկեղեցականք 8 էին։ Յովսէփ կաթողիկոս, Սահակ

եպիսկոպոս, Ղևոնդ և Մուշէ և Սամուէլ և Արշէն քահանայներ, և Քաջաջ ու Արրաճամ սարկաւազներ, Իսկ նախարարք 31 ըսուած են Փարպեցիէն, Թէպէտ ցուցակին մէջ 34 հոգի յիշուած են (Փրպ. 287—286). Իսկ Եղիշէ 35 հոգի կը դնէ և նոյնչափ ալ անուններ կուտայ. այսպէս. 1. Բարգէն և 2. Բապուր Սիւնեաց ցեղէն, 3. Ներշապուհ, և 4. Շաւասպ, և 5. Հնդին, և 6. Մեհրուժան, և 7. Պարգև, և 8. Տաճատ, և 9. Ապրսամ Արծրունեաց ցեղէն.—10 Համադասպեան, և 11. Համադասպ, և 12. Արտաւազդ, և 13. Մուշեղ Մամիկոնեանց ցեղէն,—14. Արշաւիր, և 15. Թաթուլ և 16. Վարձայ Կամսարականաց ցեղէն.—17. Վահան, և 18. Առանձար, և 19. Առնակ Ամատունեաց ցեղէն.—20. Ատոմ Գնունեաց ցեղէն.—21. Թաթուլ, և 22. Սատոյ, և 23 ու 24, երկու պլ ևս տոհմակիցք Դիմաքսենից ցեղէն.—25. Շմաւոն, և 26 Առաւան, և 27. Զուարէն Անձեացեաց ցեղէն.—28. Փափաք, և 29. Վարապղէն, և 30. Դատ Առաւելեանց ցեղէն.—31. Սահակ, և 32 Փարսման Մանգակունեաց ցեղէն.—33. Վրէն Տաշրացւոց ցեղէն.—34. Բարիկ, և 35. Յոհան Ռոփսեանց ցեղէն: Եղիշէ կը յիշէ ևս Ներսէճ և Աշոտ Կամսարականները, պլ Ներսէճ Արշաւիրի որդին պատանդ տղաքներէն մէկը կրնար ըլլալ, իսկ Աշոտ ուրիշ կողմէ բոլորովին անծանօթ մէկն է (Փրպ. 286, Եղշ. 150):

9. Ղևոնդեանց մարտիրոսութիւնը.

Երկու տարի և աւելի տեւեց Վրկանայ բանտարկութիւնը, և ոչինչ պլ պարագայ չպատմուիր կապելոց վիճակին վերայ: Կերեւ թէ շատ խիստ ալ չէր պահպանութիւնը, զի կը յիշուին Խորէն Որկովեցի և Աբրահամ Զենակեցի քահանաները, որք եկած էին յօժարակամ սպասաւորել իրենց վարդապետներուն (Փրպ. 316): Նմանապէս եկած էին և «մանկտի կապելոց նախարարաց», և «մանկունք կապելոց երիցանց» (Փրպ. 311), այսինքն է բանտարկելոց ազգականները և սպասաւորները իրենց տէրերը խնամելու, և որք անշուշտ առաջին անգամ ալ Հայաստանէ Տիիբոն ի միասին եկած պէտք է ըլլային և Տիղրոնէն ալ Վրկանայ բանտը ընկերացած էին: Ուրիշ տեղ կսուի թէ եկեղեցականաց շղթայները ատուարք էին և ծանուցք քան զնոսութիւն ամենայն երկաթոյ» (Փրպ. 307), և մանաւանդ Յովսէփ կաթողիկոսին շղթայները «առաւել քան

ղսաստկութիւն այլոց շղթայիցն ստուարագոյն և անհեղեղ էին (Փրպ. 308), այլ այս միայն Վատախրատից և աշխարհակորուսաց և աստուածասպանաց, այսինքն եկեղեցականաց համար էր. իսկ նախարարաց վրայ արտասովոր խստութիւն մը յիշուած է:

Յազկերտի 16-րդ տարին նորէն Բսւշանաց դէմ պատերազմ բացուեցու և Յազկերտ ինքնին պատերազմի գնաց, հարկաւ դարնան ըսցուելուն, 454-ին, Վրկանէ անցած ատենը հրամայեց որ կապեալ նախարարները ու եկեղեցականներն ալ ետեւէն ըրեն, և Վապար աշխարհի (այժմեան Խորասան նահանգի) նիւշապուհ ըրեղին մէջ պահեն, և այսպէս ալ գործադրուեցաւ: Միայն Սամուէլ երէց և Աբրահամ սարկաւագ բանակին հետ ի միասին տարուեցան, և բանակին քրիստոնէից երկիւղ ազդելու համար «հանապազօր չարաչար վշտով և բուռն կապանօք և դանիւ» կը տանջուէին (Փրպ. 288): Միւս կողմանէ նիւշապուհ մոգական բաղաբին իշխան դենպետն ալ իրեն յանձնուած վեց եկեղեցականներուն վրայ 40 օր շարունակ խրատագոյն տանջանքներ կը շատցնէր. խնամքը կարգելուր, և գրեթէ անսուղ կը թողուր (Եղշ. 112):

Բուշանաց պատերազմը ձախող եղաւ Պարսից. Յազկերտ զսլորացաւ, և մոգպետներ որք մինչև այն ատեն շատ գոգոհութեամբ նկատեր էին կրակասպան եկեղեցականներուն տակաւին կենդանի մնալը, Յազկերտի տարապարտ գիւթութիւնը իրրեւ աստուածներու բարկութեան պատճառ ցուցուցին, մինչ Յազկերտ մոգերուն վրայ կը բարկանար իրենց ծուլութեամբ աստուածները զսլորացուցած լինելուն համար: Յազկերտ յան կարծ փոխուեցաւ, և մոգերուն մեկնութեանց անսալով յիշեալ եկեղեցականաց մահապարտութիւնը վճռեց, եթէ ուրացութեան չհաւանին: Վճռին գործադրութիւնը նոյն վայրկենին սկսաւ, և Սամուէլ երէց և Աբրահամ սարկաւագ, երկուքն ալ Արածեցի ու Արտաշատու ատրուշանը քանդողներ, նոյն ժամոյն բանակէն դուրս առանձին տեղ մը տարուեցան, և առաջ աջ ձեռքերնին կտրուելէ ետքը գլխատուեցան, հրոտից 7-ին, կամ յուլիս 7-ին, չորեքշաբթի օր, Վատգէս կոչուած գաւառը, ուր կը գտնուէր այն օր արքունի կարաւանը:

Յատուկ սուրհանդակով լուր ղրկուեցաւ Խուժաստանի իշխանին այնտեղ աքսորեալ եպիսկոպոսին համար. և տեղւոյն մոգերը լցեալ խնդութեամբ, նախ քանի մի օրեր քերանօք և

ուրիշ տանջանք չարչարելէ յետոյ գլխատմամբ մեռուցին: Այսպէս կատարեցաւ սուրբն Թուրիկ, թարգմանչաց ընկերակիցներէն, որոյ անունը յիշեցինք Մեսրովպայ մահուան առթիւ, և որ այնուհետեւ Բասենոյ վրայ եպիսկոպոս եղած էր. և Արտաշատու ժողովականներէն մին էր, և ատրուշան մըն ալ բանդած էր հարկաւ իւր վիճակին մէջ. նահատակութեան օրը չը գիտեմք, բայց սուրհանդակին Խուժաստան հասնելուն և չարանաց օրերն ալ հաշուած ատեն, միւս վեցերուն մարտիրոսութեան շատ մեծաւոր օր մը եղած լինելը կը գտնեմք:

Իսկ Նիւշապուհ մնացող վեց գլխաւորներուն համար յատուկ պաշտօնեայ որոշուեցաւ Դենշապուհ ամբարակապետ, այն որ կանուխ յատուկ պաշտօնով 449-ին վերջերը Հայաստան ղրկուած էր: Իրեն օգնական նշանակուեցան Ջնիկան մարդպետ և Մովան անդերձապետ, վերջինս մովպետան մովպետի կողմանէ: Եղիշէ կըսէ թէ Վատգէսէ Նիւշապուհ 15 օթեան էր (Եղշ. 111), և Ճշտիւ ալ հրոտից 7-էն 16 օր յետոյ հրոտից 23 երեսկոյին (Փրպ. 299) Դենշապուհ կը մտնէր Նիւշապուհ բաղաբը, և գիշերը նոյն շահաստանին մէջ անցնելով իրեն յանձնուած գործոյն պատրաստութիւնները կը կարգադրէր:

Այստեղ Եղիշէ ընդարձակ կերպով կը պատմէ Նիւշապուհի դենպետ իշխանին դարձը, սուրբերուն վրայ տեսած արիութենէ շարժեալ և աչքովը տեսած հրաշալի տեսիլքներէն համոզեալ: Դենշապուհ զարմացմամբ կը տեսնէ մոգպետին մը կրուած և ինքզինքը բանտարկելոց վիճակակալից ըրած լինելը. նախ մոգպետը կը հարցաքննէ, խորհրդակցութեան համար նորէն թագաւորին կերթայ, և անոր հրամանով և հրահանգով, հեռաւոր երկիր կը վտարէ, որպէս զի այնտեղ վիրաւորի մը մէջ նետուի և այնպէս մեռնի (Եղշ. 112—124): Մոգպետին դարձէն և վկայութենէն Փարպեցին տեղեկութիւն չուռնի. և ոչ իսկ մի հեռաւոր ակնարկ. անոր համար ուսանք բոլորովին իսկ կեղակարծ կը կարծեն Եղիշէի պատմածը: Դիտելի է ևս որ Փարպեցւոյն ժամանակագրութեամբ երեկոյէն առաւել գիշեր մը միայն մնաց Դենշապուհ Նիւշապուհի մէջ, և դժուար էր որ այդ միջոցին մոգպետին դատը կարենար վերջացնել: Թագաւորին երթալու դալու պարագայն ալ նկատի առնլով: Միւս կողմանէ կը դժուարանամք Եղիշէն բոլորովին անհիմն զրոյցի մը հեղինակ ենթադրել: Թերեւս մոգական խմբէ պարսիկի մը դարձին և մարտիրոսութեան պատմութիւնն է,

սոյն միջոցին մէջ կատարուած, որ Սրբոց Ղևոնդեանց նահատակութեան յիշատակին հետ կցուած է:

Դենշապուհ հրահանգ ունէր դադանի նահատակել երանելիները: Այդ զգուշութիւնը Սամուէլի և Աբրահամու և Թաթիկի մարտիրոսութեանց վրայ ալ գործադրուեցաւ: Քրիստոնէից կողմանէ մարտիրոսներուն ցուցուած պատիւը և անոնց նշխարներուն տրուած յարգանքը, և Հաւատացելոց վրայ աստիճանաբար եկած քաջալերութիւնը, Պարսիկներն ալ համոզեր էր թէ մարտիրոսութիւնը բոլորովին հակառակ արդիւնք կունենան և քրիստոնէութիւնը կը զօրացնեն: Թող որ Յազկերտ ալ ոչ թէ քրիստոնէութեան դէմ նոր հալածանք հանելու միտք ունէր, այլ միայն աւելորդապաշտական հաւատքով աստուածներուն բարկութիւնը զիջուցանելու համար զոգործութիւն մը կատարել կը կարծէր: Յազկերտի բոլոր գործերուն մէջ այդ համոզումները յայտնի կը տեսնուին: Աւարայրի կոտորածէն ալ զոչ չմնաց, բանտարկեալներն ալ դատապարտել չուզեց, և երբ վերջապէս մոգներուն պատգամով աստուածներէ պահանջուած պայման մը լրացնելու որոշումը կուտայ, խստիւ կը պատուիրէ որ այնպիսի կերպով կատարեն, որ քրիստոնեայք չգիտնան թէ նոր մարտիրոսութիւններ եղած են, և կարծեն միայն թէ կապեալներ ուրիշ տեղ տարուած են: Դենշապուհի բոլոր մտադրութիւնները այդ նպատակին դարձած են:

Հասած երեկոյին ձայն կը հանէ թէ թագաւորէն պաշտօն ունի բանտարկեալները հետզհետէ արձակելու, քաղաքէն դուրս քննութիւն մը ընելէ յետոյ, և թէ նախ քահանայները պիտի տանի, խստիւ հրաման կուտայ որ հայ մարդ իրենց ետեւէն չգայ և քաղաքէն չելնէ: Սակայն սուրբերը կիմանած թէ իրենց մահուան օրը հասած է, և Խուժիկ կոչուած անձ մըն ալ որուն ուրիշ ծառայութիւններն ալ պիտի տեսնենք, դադանի կերպով լուր կը բերէ թէ այնպէս է արքունի հրամանը: Առաւօտուն սուտը հաւատացնելու համար քահանայից շղթայներն ալ կը հանեն, բայց հինցած և պինդ հաստատուած լինելուն համար ջարդելու ատենին վերքեր ալ կը պատճառեն: Եկեղեցականք նախարարաց հրաժեշտի ողջոյն կուտան, իրենց մարտիրոսութեան համար հոգևոր ուրախութիւններն՝ Պարսիկներէն իբրև սուտ յուսախաբութիւն կը մեկնուի: Առաւօտուն մինչև ժամ 3 հազիւ շղթայները կը փակուէին (Փրպ. 310), և ժամ 6-ին հազիւ ճամպայ կելնէին (Փրպ. 318) երեք

գատաւորները և վեց եկեղեցականները և զինուորաց ջոկատ մը, և Վրկանի ճանպող կերթային իբր թէ Հայաստանի կողմը և երեկոյեան դէմ կը հասնէին Ռեան անուն գիւղ մը Նիւշապուհէ 6 փարսախ հեռու: Օրը երեկոյացած յինեւուն գիշերը կը հանգչէին և միւս առտուն արշալոյսին գիւղէն ալ փարսախ մը կը հեռանային, և անկոխ ամայի ու ժոյռոտ տեղի մը վրայ Դենշապուհ և իւր ընկերք իրենց ատեանը կը կազմէին: Կիրակի առտու մըն էր (Ասդ. 80), հրոտից 25 (Փրպ. 343, Եղշ. 142), որ է 25 յուլիսի 454 տարւոյ, Յաղկերտի 16-րդ տարւոյն վերջին օրերը, և նոյն օր կատարուեցան քանիցս յիշուած վեց երանելիները, Սրբոց Ղևոնդեանց քահանայից խումբէն գլխաւորները:

Սյդ խորին թաքնութեան մէջ կատարուած նահատակութիւնը այսօր ծանօթ է մեզ ընդարձակ մանրամասնութիւններով, զորս ունիմք երկու գերընտիր մատենագիրներու, Ղալար Փարպեցի և Նդիշէ վարդապետի գրիչներով նկարագրուած: Երկուքին ալ աղբիւրը միեւնոյն Խուժիկն է, առանց որոշ անունի և լոկ հայրենիքին կոչմամբը կամ պարզապէս մակդիր անուամբը ծանօթ պարսիկ մը գաղտնի քրիստոնեայ, որ սուրբերուն և հաւատքի սիրոյն հեթանոս պարսկի կերպարանին ներքեւ եղանակ կը գտնէ Դենշապուհի ընկերանալ և ամեն բան տեսնել և նոյն իսկ մարտիրոսաց ոսկրներն ալ վերցնել և բերել և բանտարկեալ նախարարներուն եղածը պատմել և բերածը յանձնել: Զրի ենթադրութիւն մը ըրած լինել չեմք կարծեր, եթէ ըսեմք, թէ Խուժիկը որ արդէն Դենշապուհի հասած երեկոյէն գաղտնի լուրեր կը հաղորդէր կապելոց, առաջուրնէ ասոնց ծանօթը և գաղտնի օդնոդն էր, և թէ նոյն օրն ալ նախարարաց հրահանգով եկեղեցականաց հետեւեցաւ և ի յանձնարարութենէ ըրաւ ինչ որ ըրաւ Խուժիկին պատմութիւնը Արշաւիր Պապարականին բերնէն լսելով զրած է Փարպեցին (Փրպ. 344), իսկ Նդիշէ կըսէ թէ նա ինքն Խուժիկը երկրորդեց իրեն պատմութիւնը (Եղշ. 142): Բայց որովհետեւ միեւնոյն աղբիւրէ եղած պատմութիւնը ինչ ինչ տարբերութիւններ կը պարունակէ, աւելորդ չեմք սեպեր անոնց վրայ ալ մտադրութիւն դարձնել նկատելով թէ մեր Եկեղեցւոյ պատմութեան ամենակարեւոր կէտերէն մին է Ղևոնդեանց նահատակութիւնը:

Եւ նախ Խուժիկի անձէն սկսելով, Փարպեցւոյն նայելով,

Հայաստան եկող դացող Խուժաստանցի վաճառական մըն է, հայերէն ալ գիտէ, բրիտոնէի զաւակ է, բայց զինքն ամեն տեղ յայտնած չէ, Վրկանի բանտէն կապելոց ծանօթած է, և իրենց օղնութիւն և ծառայութիւն է բրած. նոյն օր կը հանգիպի Նիւշապուհ, վաճառականի ձեռով Ռեւանի ճանպուհ վրայ Դենշապուհի կը հանդիպի, և զինքն մօլի կրակապաշտ կը կեղծէ, և Դենշապուհի համակրութիւնը կը շահի, այնպէս որ սորա խնդրանք Ռեւանին դատաստանին ներկայ լինելու կը հրաւիրուի, և յետ նահատակութեան մարմնոց պահպանութեան թողուած զինուորներուն վրայ իբրեւ հսկող կը նշանակուի: Իսկ ըստ Եղիշէի, Խուժիկ արքունի գունդին մէջ զինուոր էր, ի ծածուկ բրիտոնեայ, և բանտարկելոց օրապահ էր դահճաց կարգին մէջ, վերջին գիշեր ինքնին խառնուեցաւ պահստի դռնակալին հետ, և ի միասին Ռեւան եկաւ, ամեն բան տեսաւ, դահճութիւն ալ ըրաւ, և ի վերջոյ մարմնոց պահպանութեան թողուած զինուորներէն մին եղաւ Թերեւս ժամանակի տարբերութեամբ զինուոր ալ եղաւ Խուժիկը վաճառական ալ: Բայց Փարպեցւոյն ցուցած դարձուածքը աւելի ընականութիւն ունի, մանաւանդ եթէ նախարարաց զաղտնի յանձնարարութեան պարագայն ալ աւելցնեմք. գիտնալով թէ անհնար էր անոնց այսպիսի պարագային մէջ անտարբեր մնալ, և Հայերուն Նիւշապուհէ ելնելու սոստիկ արգելքին վրայ, Խուժիկէ տարբեր մէկը չէին կրնար գտնել իրենց հոգեւորական հետաքրքրութիւնը գոհացնելու:

Վկայարանութեան հարցափորձները և մարտիրոսաց պատասխանները ընդարձակօրէն գրուած են երկուց պատմութեանց մէջ ալ, զորս զանց կընեմք քաղել սոսկ եղելութեանց պարագայները առաջ բերել բաւական սեպելով: Փարպեցւոյն պատմութեան համեմատ Սահակ եպիսկոպոսի թարգմանչութեամբ տարբերէն իւրաքանչիւրը իրեն յայտարարութիւնը կընէ, մինչև որ Դենշապուհ զպրանալով ինքն իւր սուբով Սահակի ուսը կը վիրաւորէ, որ քարի մը կըթնելով պնտեղ կը մնայ. յետոյ Յովսէփ կը գլխատուի. Ղևոնդ մերկացուելով քարաժայռներու վրայ կը քաշկռտուի, յետոյ Սուշէ և Արշէն և Քաջալ ի միասին կը գլխատուին, անոնցմէ ետքը Ղևոնդ, և հուսկ ամենայնի Սահակ: Ըստ Եղիշէի պատմութեան, նախ վեցն ալ ի միասին ոտքերէն չուան կապուելով փայտերու վրայ կը քաշկռտուին, ետքը կսկսի հարցու-

փորձը, և անկէ վերջը Աբշէնը կը պրկեն և կը գլխատեն, հացափորձը կը շարունակէ, մինչև որ Դենշապուհ ինքնին Սահակայ աջ ուսը կը կտրէ, և բոլորը գլխատելու հրաման կուտայ. Աւոնդի հրաւիրանօք առաջին գլխատուողը կը լինի Յովսէփ, անկէ ետքը Աւոնդ և Մուշէ և Քաջաջ, և ամենէ վերջը Սահակ, Գլխաւոր կէտերը միեւնոյն են, իսկ ինչ ինչ պարագայներ նաև միեւնոյն անձի զանազան անգամ պատմելուն մէջ կրնան տարբերութիւն կրել. նկատելով մանաւանդ որ երեք դատաւորներն ալ զատ զատ հրամաններ կրնային արձակել կամ թէ դիպուածները յետ և յառաջ տրուիլ:

Յովսէփ կաթողիկոսի համար ինչ որ կարևոր էր, ըստ բաւականին արդէն բացատրեցինք. Աւոնդ անոր վրայ խօսելով ըսած է, թէ «մանկագոյն քան զիս տեսանէք տիօք» (Փրպ. 263), որ աչքի զարնելու չափ տարիքի տարբերութիւն մը կենթադրէ, և հաւանաբար 60 կամ 60-ի մօտ տարեկան պէտք է ըսել, և այս հիմամբ Յովսէփ Հողոցմեցի գրի գիւտի ժամանակ նորահաս պատանի մը միայն կրնայ եղած ըլլալ. Յովսէփայ բանտարկութեան միջոցը երեք տարի կը լինի 451 տարւոյ յուլիսէն սկսելով. Արկանի բանտին մէջ ցմահ դատապարտութիւնը առիթ տուաւ նոր կաթողիկոս դնելու նորա կենդանութեան ժամանակ, նոյն իսկ Յովսէփայ հաճութեամբ (Յովհ. 78) Սակայն ոչ իբրև իսկական կաթողիկոս պէտք է ճանչնալ զնա մինչև գլուխը սուրին մատուցած վայրկեանը. Սուրբն Յովսէփ միակ բուն մարտիրոսն է կաթողիկոսներու շարքին մէջ, Լուսաւորիչ չարչարուեցաւ ըայց բռնական մահուամբ չմեռաւ, իսկ իւր որդիք և թոռունք որք բռնական մահ ունեցան, ոչ թէ հաւատքնին ուրանալու բռնադատութեան ենթարկուեցան, այլ թշնամական դաւաճանութեանց զոհ եղան. Աբդէն պաշտպանեցինք թէ Յովսէփ եպիսկոպոսական և կաթողիկոսական ձեռնադրութիւն ալ ունեցած է, և ի դէպ է նկատել թէ նոյն, իսկ Փարպեցին վերջին պահուն Յովսէփին համար, «արդարեւ կաթողիկոս կոչմամբ խօսքը գրելով մեր պաշտպանածը կամբացնէ» (Փրպ. 269). Աւելի վար Աւոնդի բերնով նախ Յովսէփայ ապա Սահակայ բարձրագոյն աստիճան ունենալը շեշտելէ ետքը, մնացեալները ի մի կը խառնէ, «Իսկ այլքս և ես միատեսեմք ըստ կարգի քահանայութեան» (Փրպ. 263), և դարձեալ «Տէր Յովսէփ կաթողիկոս», «Տէր Սահակ եպիսկոպոս», «Տէր Աւոնդ երէց, և այլ կոչումներով որոշ աստիճաններ կը զատէ:

(Փրպ. 285), և ի վերջոյ դարձեալ խրատարանութիւնը Ղևոնդին տալէն ետքը օրհնութիւն տալը Յովսեփայ և Սահակայ կը վերապահէ (Փրպ. 306):

Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց, և հաւանաբար ինքն ալ Ռշտունի, Թարգմանչաց կարգը յիշուած է. բայց իբր քաջ պարսկագէտ ցուցուած լինելով, ուսումնական անձ մը լինելը կը հաստատուի, և Սահակ Մեորոպեան հաբիւրոց մէջ դնել իրաւացի կը դառնայ Արտաշատու ժողովական եպիսկոպոսներէն մէկն է. գործոց մէջ միշտ յառաջադէմ և արի, Ռշտունեաց դաւառը Պարսից շատ մօտ լինելով Սահակ առաւելագոյն արիութեան և գործունէութեան պէտք ունեցած է. Յովսեփայ խօսքերէն կը յայտնուի թէ ըստ կարգի ալեաց, նախապատիւ էր Սահակ (Եղշ. 132), և 70-է վեր տարիք պէտք է ունեցած ըլլայ:

Նոյնպէս լի աւուրբ ծերունի մըն է և Ղևոնդ, Վանանդ գաւառի Իջևանից գիւղէն. Սահակայ հայրապետի երիցագոյն աշակերտներէն էր 415-ին ատենները, և վերջին անգամ, և վերջին խօսքերուն մէջ ինքն իսկ կը շեշտէ իւր տաքիքին ճի կատարումն մերձաւորութիւն՝ տաքած լինելը (Փրպ. 336). Այդ մարտիրոս եկեղեցականաց խնամքին մէջ կաթողիկոս մը և երկու եպիսկոպոս գտնուած ատեն, Ղևոնդ երէցին առնունով Ղևոնդեան կոչուելը, սոյն սքանչելի անձին բարձր ձիրքերուն և բարձրագոյն արդիւնքներուն վկայութիւնն է:

Միւսներուն համար որոշ նշաններ և պարագաներ չունիմք, բայց յայտնի է թէ նորահաս երիտասարդներ էին, և գործոց մէջ հինցած պաշտօնեայններ էին, նոյն իսկ Քաջաջ Ռշտունի և Աբրահամ Արածեցի սարկաւազները:

Մարտիրոսաց յուրը չտարածուելուն և նշխարները չցրուելուն զգուշութեան համար, Դենշապուհ ինը զինուորներ կը թողու և Խուժիկն ալ անոնց ընկեր, որ մինչև տասն օր հսկեն: Այլ երկնային կայծակներ և փայլակներ ահուդող կը տփռեն պահապաններուն վրայ, և Խուժիկէ քաջալերեալ չորրորդ օրը կը թողուն ու կը փախն (Եղշ. 140), և վեցերորդ օրը Նիւշապուհի մէջ Դենշապուհի կը հաղորդեն եղածը (Փրպ. 348). Խուժիկ քանի մը օր ևս սպասելէ և ամեն կողմէ ապահով լինելէ յետոյ, տասը հաւատարիմ ընկերներ ճարելով Ռեւանի քարաժայռներուն կը դառնայր և Սրբոց մարմիններուն միսը ոսկրներէն զտելով, միսը զգուշութեամբ կը թաղէր և

ոսկրները գազտնի Նիւշապուհ կը բերէր, և մարտիրոսութեան մանրամասնեալ պատմութեամբ և մարտիրոսաց ցանկալի նըշխարներով կապեալ նախարարները կը միութարբէր, և մանաւանդ Արշալիր Կամսարականը որ ամեն ուր մինչև իւր մահը այս պատմութիւնները կը կրկնէր, և զորս անկէ լսելով ամենայն ճշտութեամբ զրել ուզած է Ղազար Փարպեցի (Փրպ. 356)։

Խուժիկի վերջին դործը և մարտիրոսաց նշխարներուն նկատմամբ կիրարկած ձևը, քիչ մը տարօրինակ է ստուգիւ, բայց Խուժաստանցի բարեպաշտութիւնն ալ քիչ մը տարօրինակ կրնայ ըլլալ. իսկ թէ ինչ եղան Խուժիկի նշխարները տեղեկութիւն չունիմք, և ոչ իսկ Սրբոց Ղևոնդեանց մասունքներ կան մէջ տեղ. Հարկաւ հարկ չկայ ենթադրել թէ վեց սուրբ բերուն ալ ոսկրները ամբողջաբար վերուցած լինի Խուժիկը, այլ իւրաքանչիւրէն մէկ երկու ոսկր իւր յիշատակ վերուցած պէտք է ըսել. ամբողջական փոխադրութիւնը աչքի ալ կրնար զարնել և դիտողութեան տեղի տալ։

Յովսէփ Հոգոցմեցի կաթողիկոսին պատմութիւնը փակած ատեննիս պէտք է յիշել, թէ Վարդանանց նահատակութեան տարին տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը, որ թէպէտ Հայաստանէ դուրս այլ Հայոց եկեղեցական պատմութեան հետ մնծկապ ունեցող դիպուած մը եղած է. Ժողովը բացուեցաւ Կոստանդնուպոլսոյ հանդէպ Բիւթանիոյ ծովեզերքին վրայ գտնուող Քաղկեդոն քաղաքը, 451 հոկտեմբեր 8-ին և շարունակեց մինչև նոյեմբեր 1. երբ Յովսէփ կաթողիկոս և Ղևոնդ եւէջ տարուած էին ի Տիգրան, և նախարարներն ալ խաբկանօք այնտեղ կը տարուէին։ Ժողովոյ գումարողն էր Մարկիանոս կայսր, որ Թէոդոսի Բ-ի յաջորդելով, չէր ուզած Պարսիկներուն հետ թշնամանալ և զլացեր էր Հայոց խնդրած օգնութիւնը և անօգնական թողած էր հալածեալ քրիստոնէութիւնը։ Մարկիանոսի անուան ալ գործն ալ ատելի եղած էին Հայոց, և ոչ մի կերպով այն կողմ մտադրութիւն դարձնելու առիթ չունէին Հայերը, և այդ միջոցին և ոչ իսկ թերեւ լուր մը առած էին ժողովին վրայ. Խնդրոյն կարեւորութիւնը յաջորդ վեցերորդ դարուն մէջ կը սկսի. և հետեւաբար հինգերորդ դարու յիշատակներուն մէջ պէտք է եմք զգար այդ կէտին վրայ տեղեկութիւններ կամ տեսութիւններ գրել։